ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ֆրանս. գործակալութեան տեղեկատուութեան համաձայն, Թասսի ՊՊՊակիցը Նիւ Եորքից հաղորդում է, թէ Ամերիկայի հայկական կազմակերպութիւնները պարբերական ցոյցերով պահանջում են՝ Թուրքիային կցուած ժողովրդի հայկական հողերը վերադարձնել Խ. Հայաստանին։ Նման առաջարկ արուել է նաև Դաշնակից պետութիւնների արտաքին գործոց նախարարների խորհրդաժողովին։ Ցիշեալ ՊՊՊակիցը խօսելով Կալիֆորնիայի հայ ազգային խորհրդի մասին, որը 25 հազար անդամ ունի, ասել է թերում յիշեալ մարմնի պատգամի այն տողերը, թէ Թուրքիան առաջին պատերազմի ընթացքում դաշնակից էր Գերմանիայի հետ, իսկ երկրորդ պատերազմին էլ մի «կեղծաւոր չէզոք ընթացք» կիրառեց, մինչդեռ հայերը ազգային ծառայութիւններ մատուցին Դաշնակիցներին յաղթութեան։ Ամերիկայի մեծ քաղաքների հայկական կազմակերպութիւններն ևս այդ առթիւ վճռագրեր են հրատարակել։

Թասսի ՊՊՊակցի լրատուութեան համաձայն, Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը, որը յիսուն մասնաճիւղ ունի, ամերիկացիներից կազմուած մի կոմիտէ է ընտրել, որպէսզի աբգիլեն հայերի վերաբերմամբ եղած անարդարութիւնները։